

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է նախարարությունում քաղաքացիական ծառայության հետևյալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

Իրավաբանական վարչության իրավական ապահովման և պայմանագրային բաժնի գլխավոր մասնագետ (30-2.3-143)

Գլխավոր մասնագետը՝

- իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է մասնավորեցման ծրագրերում չընդգրկված մասնավորեցման ենթակա պետական կազմակերպությունների մասնավորեցման ծրագրում ընդգրկելու գործընթացին.
- Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է գնումների, կազմակերպությունների լուծարման և մասնավորեցման նախապատրաստական գործընթացին.
- օժանդակում է Նախարարության ստորաբաժանումների կանոնադրությունների մշակմանը, պատրաստում է քաղաքացիաիրավական պայմանագրերի նախագծերի վերաբերյալ իրավական եզրակացություններ.
- Բաժնի պետի հանձնարարությամբ պատրաստում է Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի քննարկմանը ներկայացնելու համար գյուղատնտեսության ոլորտին առնչվող համապատասխան իրավական ակտերի նախագծեր.
- իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև Բաժնի պետի հանձնարարությամբ, նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ.
- Բաժնի պետին, ըստ անհրաժեշտության, ներկայացնում է առաջարկություններ՝ Բաժնի աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու և աշխատանքային խմբեր կազմավորելու համար.
- իրականացնում է նախարարության պայմանագրերի բնօրինակների հաշվառման և գրանցման աշխատանքները.
- իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- ունի իրավագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ, կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների

պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Իրավական ակտերի մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Աշխատավարձի չափը՝ 212,309 (երկու հարյուր տասներկու հազար երեք հարյուր ինը) ՀՀ դրամ

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության անձնակազմի կառավարման բաժին /ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, հեռ. 011-52-58-57/:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնն առաջանալու հիմքի վերացման ժամկետն է՝ 18.03.2021թ. (մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրված արձակուրդ).

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- գրավոր դիմում,
- անձնագրի պատճենը,
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
- աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում).
- արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար 3x4 սմ չափսի:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 25.09.2018թ.